ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«15» 06 2023 թ.
№ ՊՄՇՏ/2-778

«ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00907104) տնօրեն
Ս. Բեկովին
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աջափնյակ, Ֆուչիկի 27
էլ. հասցե՝ arsenal.gnumner@gmail.com
հեռ.՝ 055-05-77-78

ՀՀ պաշտպանության նախարարության և «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերության միջև 08.10.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-18 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերությունը 2022թ. 4-րդ եռամսյակի ընթացքում, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ., պետք է մատակարարեր պայմանագրով նախատեսված ապրանքներ, որոնք ընդհանրապես չեն մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. հունիսի 15-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 110 870 511 ՀՀ դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 28.04.2023թ. ներառյալ իսկ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005570115 հաշվեհամարին փոխանցել 1 205 114 250 ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի շրջանակներում հատկացված կանխավճարի հետ վերադարձ:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ սույն գրությամբ նախատեսված ժամկետում պարտավորությունները չկատարելու դեպքում «ԱՐՍԵՆԱԼ ԼՏԴ» ՍՊ ընկերության նկատմամբ կկիրառվեն վերոհիշյալ պայմանագրով նախատեսված այլ պատասխանատվության միջոցները:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am